ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

25.03. 2017թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյան Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը և Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.2016-17 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի ձևավորման մասին:
/Զեկ Ն. Խուդավերդյան/
2.2016-2017 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին – Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են տնօրենը կամ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողներ, տվյալ ոլորտի կազմակերպությունների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների և բուհերի մասնագետներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ մասնաճյուղի աշխատակիցներ: Հաշվի առնելով այս

ամենը Ն. Խուդավերդյանը ներկայացրեց 2016-17 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը.

«Տնտեսագիտության տեսություն»

1.Հովհաննիսյան Հովիկ Գուրգենի	ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի ֆինանսահաշվային վարչության պետ, գլխավոր հաշվապահ, նախագահ
2.Հովհաննսիյան Գուրգեն Ժորժիկի	նախագահի տեղակալ, ԵՊՀ բակալավրիատի բաժնի պետ, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ,
3.ԽուդավերդյանՆելլի Բաբկենի	տեխ.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի դեկան,
4.Մարզպանյան Հարություն Ալեքսանի	տ.գ.դ., պրոֆեսոր, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
5.Գալստյան Հասմիկ Նորիկի	տ.գ.թ., ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,
6.Դավթյան Արկադի Ցոլակի	ուսումնամեթոդական վարչության պետ,
7.Մելիքջանյան Լևոն Վալոդի	«ԱՇԻԲ» ՓԲԸ «Իջևան» մասնաճյուղի կառավարիչ,
8.Առաքելյան Վահագն Վոլոդյայի	Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն:

«Սերվիս»

1. Ապրեսյան Մեխակ Վեմիրի	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության զարգացման քաղաքականության վարչության պետ, նախագահ,
2.Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի	նախագահի տեղակալ, ԵՊՀ բակալավրիատի բաժնի պետ, աշխ. գիտ.թեկնածու, դոցենտ,
3.ԽուդավերդյանՆելլի Բաբկենի	տեխ.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի դեկան,
4.Ազիզյան Հռիփսիմե Մկրտչի	մ.գ.թ., տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
4.Դավթյան Արկադի Ցոլակի	ուսումնամեթոդական վարչության պետ,

5.Ղահրամանյան Հովհաննես Ղահրամանի Տավուշի մարզի «Տուրիզմի զարգացման գործակալություն » ՀԿ նախագահ,

6.Նազինյան Գրիգոր Ցոլակի Իջևան «ԱԱՊԿ» ԲԲԸ –ի տնօրեն:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Պ. Ասիլբեկյանը, Վ. Առաքելյանը

Նրանք նշեցին, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը համապատասխանում է մասնաճյուղում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի ընդհանուր դրույթներին: Արտահայտվողներն առաջարկեցին հաստատել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը:

Որոշեցին - Հաստատել 2016-17 ուս. տարվա տնտեսագիտության ֆակուլտետի երկու մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց 2016-2017 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության գրաֆիկները.

«Տնտեսագիտության տեսություն»

Ամփոփիչ քննություն	21.05.17թ.
Ավարտական աշխատանքների պաշտպանություն	28.05.17թ.

«Սերվիս»

Ամփոփիչ քննություն	20.05.17թ.
Ավարտական աշխատանքների պաշտպանություն	27.05.17թ.

Որոշեցին - հաստատել 2016-2017 ուս. տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության գրաֆիկները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

3.1.Լսեցին - 2016-2017 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների գրավոր բողոքների քննարկման մասնակիցների կազմի հաստատման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ շրջանավարտը կարող է բողոքարկել ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, արդյունքները հրապարակելուց 1 ժամվա ընթացքում: Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են մասնաճյուղի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող

աշխատակիցը և մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են տնօրենի կողմից: Այդ իսկ պատճառով ներկայացնում եմ 2016-17 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների գրավոր բողոքների քննարկման մասնակիցները կազմը

1.Ավետիսյան Գայանե Հրաչիկի	ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, «Տնտեսագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու,
2.Քարտաշյան Հասմիկ Հարությունի	տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԽ նախագահ:

Որոշեցին - հաստատել 2016-2017 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների գրավոր բողոքների քննարկման մասնակիցների կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3.2.Լսեցին - 2016-17 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկների հաստատման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ իսկ պատճառով կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը: Ելնելով սրանից ներկայացնում եմ 2016-17 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկները

Տնտեսագիտության տեսություն	21.04.17թ., 13^{30}
Սերվիս	21.04.17թ., 13^{30}:

Որոշեցին - հաստատել 2016 - 17 ուս. տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության գրաֆիկները :

Գիտխորհրդի նախագահ	***Ն. Խուդավերդյան***
Քարտուղար	***Ա. Սարիբեկյան***